

ՕՍՄԱՆՅԱՆ ՀՆԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

1988 թ. սկստեմբերի 26-ից հոկտեմբերի 16-ը Սոֆիայում տեղի ունեցավ ԵՕՍՄԱՆՅԱՆ ՀՐ-Նագրական և դիվանագիտական փաստաթղթերի ուսումնասիրության երկրորդ միջազգային սեմինարը: Նշենք, որ նույն թեմայով առաջին սեմինարը տեղի էր ունեցել 1982 թ. մարտին Բուդապեշտում:

Սեմինարը կազմակերպել էր Միջերկրական ծովի և Բալկանյան երկրների ժողովուրդների պատմական աղբյուրների ուսումնասիրության միջազգային կենտրոնը, որը ֆրանսերեն հապաված կոչվում է ՍԻԲԱԼ (CENTRE INTERNATIONAL D'INFORMATION SUR LES SOURCES DE L'HISTOIRE BALKANIQUE ET MEDITERRANEEENNE): ՍԻԲԱԼ-ը ստեղծվել է 1976 թ. սեպտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ, որի հիմնական նպատակն է մասնագետներ պատրաստել և առավել խորացնել Միջերկրական ծովի ավազանում գտնվող երկրների և բալկանյան ժողովուրդների պատմությանը վերաբերող ձեռագիր աղբյուրների վերծանության և ուսումնասիրության ասպարեզում երիտասարդ մասնագետների գիտելիքները, ինչպես նաև համագործակցելու հնարավորություն ստեղծել այդ ասպարեզում աշխատող տարբեր երկրների մասնագետների միջև:

ՍԻԲԱԼ-ը ունի իր նախագահությունն ու քարտուղարությունը, ինչպես նաև ներքին կանոնադրությունը՝ 19 հոդվածից: Ըստ 1986 թ. ընտրության արդյունքների ՍԻԲԱԼ-ի խորհուրդը բաղկացած է տարբեր երկրների 22 ներկայացուցիչներից: Պրեզիդենտն է ժորժ Կուրնուտոսը (Հունաստան), փոխպրեզիդենտը՝ Ֆաուստո Պուսչևսկին (Իտալիա), գլխավոր գիտական քարտուղարն է ակադ. Նիկոլայ Տոգոբովը (Բուլղարիա), քարտուղարության տնօրենն է Ժիվկո Կարազաևը (Բուլղարիա): Առ այսօր ՍԻԲԱԼ-ը կազմակերպել է սլավոնական ժողովուրդներին պատկանող ձեռագրերի ուսումնասիրության և թարգմանության երկու, լատինականին՝ չորս, բուլղանականին՝ երկու սեմինար:

Վերոհիշյալ սեմինարին հրավիրված էին 25 երիտասարդ մասնագետներ և 15 փորձառու և մեծ մասամբ միջազգային ճանաչում վայելող

գիտնականներ, որոնք էլ հիմնականում ելույթ ունեցան զանազան թեմաներով:

Սեմինարի նիստերը տեղի ունեցան Կիրիլ և Մեթոդիի անվան ժողովրդական գրադարանի նիստերի դահլիճում: Սեմինարի պաշտոնական բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 27-ին: Բացման խոսքով հանդես եկան և մասնակիցներին շնորհավորեցին ՍԻԲԱԼ-ի քարտուղար Ժիվկո Կարազաևը և Կիրիլ և Մեթոդիի ժողովրդական գրադարանի տնօրեն Պետար Կարանզովը:

ԵՕՍՄԱՆՅԱՆ պետության փաստաթղթերը թեմայով ելույթ ունեցավ բալկանագիտության ինստիտուտի աշխատակից Ասպարուխ Վելկովը: Նշենք, որ նա երկար տարիներ աշխատել է արխիվներում գտնվող օսմանյան փաստաթղթերի վրա: Ժամանակագրական առումով նա դրանք բաժանում է երկու շրջանի՝ XV—XVIII և XIX դդ.: Օսմանյան կառավարության XV—XVIII դդ. վարչաիրավական գրությունները նա բաժանում է 29 առանձին խմբերի. ինչպես, օրինակ, նամակներ (նամակ, գրություն), թելխուսներ (համառոտ տեղեկագիր), իմամներ (համառոտագրություն), դաֆթարներ (մատյան), սենեդներ (մուրհակ, պարտաճուրհակ), սուրետներ (բանաձև, գրություն), թեղքներներ (տեղեկանք, մուրհակ) և այլն: Իսկ այս խմբերից յուրաքանչյուրն ունի իր տարատեսակները: Օրինակ, թեղքներն ունի 55, նամակ՝ 51, դաֆթարը՝ 38, սենեդը՝ 28, փուտուլա՝ 8 տարատեսակ: Ա. Վելկովը կանգ առավ առավել կարևորություն ներկայացնող վավերագրերի ծագման և օգտագործման նպատակի, նրանց կառուցվածքի և թուրք պաշտոնյաների ստորագրության ձևերի վրա: Ընդհանուր ծանոթություն տվեց նաև XIX դարում մասնակի փոփոխության ենթարկված փաստաթղթերի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ այս և հաջորդ զեկուցումները դասախոսական բնույթ էին կրում, քանի որ միաժամանակ ցուցադրվում էին նյութի հետ առնչվող փաստաթղթերը: Հաջորդ օրերի զեկուցումների ընթացքում ելույթ ունեցողները նիստի մասնակիցներին էին բաժանում իրենց թեմայի հետ առնչվող վավերագրերի բազմաց-

քած օրինակները, խոսում նրանց կառուցվածքի և էություն մասին և նույնիսկ առաջարկում համատեղ վերծանել և թարգմանել առանձին գրքավար ընթերցանի բառերը:

Մայքլ Քիլը (Բոնն) խոսեց «Ջիզիե դաֆ-թաոների առաջացումը և նրանց նշանակությունը որպես աղբյուր դեմոկրաֆիական հետազոտության համար» հարցի շուրջ: Հնաաքեր-րություն առաջացրեց նաև նրա հաղորդումը օսմանյան կառավարության կողմից օտարահպատակների տրամադրված անձնագրերի մասին: Նրա ցուցադրած անձնագրի մի երեսին, որը տրված է եղել հուլանդացի մի վաճառականի, գրված էր անձնագրի տիրոջ անուն ազգանունը, նաև հայերեն: Առայժմ հայտնի չէ հայերեն գրության պատճառը:

Բուլղար պատմաբան Նվզենի Ռադուշևը խոսեց Մեվլադի (ռոճիկ) մատյանների դիվանագիտական-հնագրագիտական բնութագրման և օսմանյան բանակի համար դրանց նշանակության մասին: Իսկ Ստոյանկա Կենդեբովան՝ XVII դարում օսմանյան թուրքերի կողմից Սիրիայի արարներին տրված «Հյուշըթ-ի զահրեի (վկայագիր)» փաստաթղթերի մասին:

Հարավսլավացի գիտնական Մարի Լուկաչի զեկուցումը նվիրված էր օսմանյան կենտրոնական կառավարության հետ Միլոշ Իլխանի (XV դար) փոխանակած թղթակցություններին և այլ վավերագրական գրություններին, որոնք պահվում են Բելգրադի արխիվում: Նա նշեց, որ այդ նյութերը կարևոր նշանակություն ունեն Հարավսլավիայի վարչաիրավական և սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար: Ստրաշիմիր Դիմիտրովը կանգ առավ «Օսմանյան փաստաթղթերը որպես աղբյուր բալկանյան ժողովուրդների դեմոկրաֆիական պատմության» հարցի վրա: Ֆրանսիացի պատմաբան Ժիլ Վանշտայնի թեման էր «Միլանի դիտողություններ Մյուհիմմե զաֆթարների մասին»: Համեմատելով ֆերմանների բովանդակությունը մյուհիմմե զաֆթարների մեջ կատարված գրանցումների հետ, նա ցույց տվեց, թե ինչպես են կատարվել դրանք:

Դամասկոսի համալսարանի դասախոս Արդուլ Քարեմ Ռաֆեկը, որն իր դոկտորական դիսերտացիան պաշտպանել է Լոնդոնում, առավելաբար նորագույն շրջանի մասնագետ է, սակայն զբաղվում է նաև արար ժողովրդի միջնադարյան պատմության հարցերով: Նա անգլերեն լեզվով հրապարակել է «Օսմանյան կայսրությունը և արարները» (1516—1916 թթ.) աշխատությունը: Իր զեկուցման մեջ նա համեմատություններ կատարեց շարիաթի և օսմանյան օրենքների միջև ըստ Սիրիայում գրեթե միշտ դատական արձանագրությունների նշեց,

որ օսմանցիները Սիրիան նվաճել են 1516 թ., սակայն իրավական օրենքները գործածություն մեջ են մտել 1535 թ. հետո: Նա անդրադարձավ նաև հարկային սխտեմին և ամուսնական հարկերին:

Կիրիլ և Մեֆոդիի անվան գրադարանի գիտաշխատող Նիկոլա Ռոբեվի թեման էր դրամահատմանը և դրամի փոխանակությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրումը Օսմանյան կայսրությունում:

Հոկտեմբերի 4-ին Ստոյանկա Կենդեբովան, որը գրադարանի ձեռագրային բաժնի վարիչն է, նիստի մասնակիցներին ընդհանուր ծանոթություն տվեց գրադարանում պահվող օսմանյան ձեռագրերի մասին: Միևնույն ժամանակ ցուցադրեց այդ փաստաթղթերից մեկական նմուշ: Նշեց, որ գրադարանում պահվում է մոտ 300000 վավերագրական միավոր, որոնք ըստ բովանդակության բաժանված են առանձին խմբերի՝ իրավաբանական, ռազմական, ծովային, տնտեսական, կրոնական, գյուղատնտեսական և այլն: Ներկայումս կազմվում են թեմատիկ կատալոգներ առանձին երկրների վերաբերյալ, այդ թրվում է հնաստանի, Հարավսլավիայի, Բուլղարիայի և այլն: Գրադարանում առկա են նաև բավականաչափ թվով արաբերեն և պարսկերեն ձեռագրեր: Նա ցուցադրեց 1981 թ. Սոֆիայում բուլղարերեն լեզվով հրատարակված Մարիա Կիսելիչևիայի «XVI դարի պարսկերեն մանրանկարները» գիրքը, որտեղ ընդգրկված են նաև նմուշներ XII դարի պարսկերեն ձեռագրերից, ինչպես, օրինակ, «Մարգարեի հերիաթները», Թիմուր փաշայի «Ջաֆեր նամեն»:

Հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ «Կար սեզանի շուրջ» վերջին նիստը «Օսմանա-թուրքական» պատմական աղբյուրների և վավերագրերի թարգմանության և հրապարակման սկզբունքները թեմայով: Նախագահում էր դոկտոր, պրոֆեսոր Վերա Մուլիաֆչիեան: Եզրափակիչ խոսքով հանգես եկավ Սիրիա-ի գլխավոր քարտուղար, ակադեմիկոս Նիկոլայ Տոդորովը: Այնուհետև կարդացվեցին զեկուցումներ: Դարձյալ ուշադրություն արժանի էր Ասպարուխ Վեկլեովի «Օսմանա-թուրքական փաստագրական աղբյուրների հրապարակումն ու թվագրությունները» զեկուցումը: Արևելագիտության ինստիտուտի լեհ-նիդերլանդական բաժանմունքի տնօրեն Յուրի Պետրոսյանը խոսեց Սովետական Միությունում թուրքական միջնադարյան ձեռագրերի հրապարակման գործում կատարված աշխատանքների մասին, հատկապես կանգ առավ Ա. Տվերիտինովայի, Յու. Պետրոսյանի և Ի. Պետրոսյանի՝ հրատարակած ձեռագրերի վրա: Նշեց, որ ներկայումս իրենց մոտ խիստ զգացվում է այս ասպարեզում մասնագետների պակասը: Նա

շնորհակալություն հայտնեց, որ ՍԻՐԱԼ-ի միջոցով հնարավորություն է ընձեռվում համագործակցելու և փոխհարաբերությունների մեջ մտնելու տարբեր երկրների մասնագետների հետ, սակայն դեռևս նկատվում է, որ ինֆորմացիայի փոխանակությունը կատարյալ չէ։ Նա օրինակ բերեց 1987 թ. Ի. Պետրոսյանի հրապարակած «Ենիշերինների զորախմբի օրենքների առաջացման պատմությունը» վերաբերող լենինգրադյան ձեռագիրը։ Պարզվեց, որ Բուզապեշտի արխիվում ևս գոյություն ունի համանման մի տարբերակ և հունգարացի մասնագետները շուտով հրատարակության են հանձնելու այդ ձեռագիրը։ «Մինչդեռ, — ասաց նա, — նախապես ինֆորմացիա ունենալու դեպքում կըհամագործակցեինք և այդ երկու ձեռագրերի համեմատության հիման վրա կպատրաստեինք հրատարակությունը»։

Մեր զեկուցման վերնագիրն էր «XVI—XVII դդ. օսմանյան փաստագրական աղբյուրների ուսումնասիրումն ու հրապարակումը Սովետական Հայաստանում», որտեղ խոսվեց թուրքական միջնադարյան պատմական աղբյուրների և վավերագրական փաստաթղթերի, այդ թվում սուլթանական ֆեռմանների, կանոնադրմանների, դաֆթարների, պատմաաշխարհագրական նյութերի հայերեն թարգմանության և հրատարակության մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն պատմական Հայաստանի քաղաքական պատմության և սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանման համար։ Մանրամասն

կանգ առանք Ա. Սաֆրաստյանի և Մ. Զուլալյանի այդ ասպարեզում կատարած աշխատանքների վրա։ Խոսեցինք նաև ներկայումս ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում և Մաշտոցի անվան Մատենադարանում՝ հատկապես Հ. Դ. Փափազյանի կատարած աշխատանքների և մոտ ապագայում հրատարակության պատրաստվող գրքերի մասին։ Ընդհանուր տեղեկություններ տվեցինք, թե որտեղ և ինչպիսի նյութեր կան Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների վերաբերյալ, իրոք որ վերջին 25 տարիների ընթացքում մեզ մոտ բավականաչափ աշխատանք է կատարվել օսմանյան պատմական և փաստագրական աղբյուրների թարգմանության և հրատարակման ուղղությամբ, և վերջին շրջանում այդ ուղղությամբ աշխատանքները առավել լայն ընդլայն են ստանում։ Զեկուցման մեջ մենք հերքեցինք ժամանակակից թուրք պատմաբան Ցավուղ էրջանի այն միտքը, որ իբր հայ պատմաբանները անտեսում են թուրքական աղբյուրները և չեն օգտագործում դրանք։ Իրականում հայ պատմաբանները մանրակրկիտ ուսումնասիրել են ոչ միայն միջնադարի թուրք պատմագիր-տարեգիրների երկերը, այլև հատուկ ուշադրություն են դարձրել ուշ շրջանի հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող ուսումնասիրությունների վրա և տվել դրանց օբյեկտիվ գնահատականը։

Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ